

ԳԱՎԱ ՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏԻ

08.06.2013թ.

Մասնակցում էին խորհրդի 17 անդամներ

Օրակարգ`

1. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունների քննարկում և միջոցառումների ծրագրի հաստատում
2. 2013-2014 ուստարվա ուսումնական և աշխատանքային պլանների նախնական քննարկում
3. Տնտեսագիտական ֆակուլտետի խնդիրները՝ կապված կրթական փոփոխությունների իրականացման արդի գործընթացի հետ

*1. Լսեցին* Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունների և միջոցառումների ծրագրի հաստատման մասին հարցը /Զեկուցող՝ Ս. Ամիրխանյան/

*Արտահայտվեցին* Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզոյանը, Գ. Խաչատրյանը:

*Որոշեցին*

1. Հաստատել միջոցառումների ծրագիրը:
2. Հանձնարարել ամբիոններին միջոցառումների ծրագրի հիման վրա կազմել ամբիոնի միջոցառումների ժամանակացույց՝ նոր ուսումնական տարում դրանք կենսագործելու համար:

*2.Լսեցին* 2013-2014 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային ծրագրերի նախնական ներկայացումը ամբիոնի վարիչներ Հ. Զաքոյանի, Վ. Կարապետյանի և Հ. Ղուլոյանի կողմից:

*Արտահայտվեցին* Ս. Ամիրխանյանը, Հ. Հարությունյանը, Ն. Օհանյանը, Գ. Խաչատրյանը, Վ. Առաքելյանը, Հ. Ղուլոյանը, Վ. Կարապետյանը, Ա. Ղարաբաղյանը, Հ. Զաքոյանը:

*Որոշեցին* Հաստատել նախնական ներկայացված ծրագրերը, դրանց հիման վրա կազմել դասախոսների ուսումնական բեռնվածքը և օգոստոս ամսին ներկայացնել ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:

*3.Լսեցին* Տնտեսագիտական ֆակուլտետի խնդիրները՝ կապված կրթական փոփոխությունների իրականացման արդի գործընթացի հետ /Զեկուցող՝ Ս. Ամիրխանյան/

*Արտահայտվեցին* Գ. Խաչատրյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզոյանը, Ա. Ղարաբաղցյանը, Հ. Զաքոյանը, Վ. Առաքելյանը:

*Որոշեցին* Հանձնարարել դեկանատին և ամբիոններին՝ կազմել ֆակուլտետում կրթական բարեփոխումների իրականացման միջոցառումների՝ որպես տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակարգի բաղադրիչի կենսագործման ժամանակացույց և աշխատել դրան համապատասխան:

Խորհրդի նախագահ՝

Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝

Ա. Ավետիսյան